


Հ.Մ.Ը.Մ.ի
ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՅՑ





ՅԱՌԱՋ ՆԱՅԱՏԱԿ (ՔԱՅԼԵՐԳ Հ.Մ.Ը.Մ.Ի)

Դաշնաւորուն՝ Բ. ԿԱՆԱԶԵԱՆ

Հեղինակ՝ Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

Յառա՛ջ նահատակ ցեղի անմահներ՛ր,
Վեց դարու անմոռ վրէժի զրահներ,
Կատարն հայրենի լերանց հեռագոյն,
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն:

Հսկայ նուիրման
Տորմի՛ղ հըրաթել,
Կամաւո՛ր բանակ,
Յառա՛ջ, յառաջ անսասան,
Յառաջ անդեդել,
Դէպի յաղթանակ, յաղթանակ:

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,
Տարագիր հայն իր կեանքը նորոգեց,
Երէկ՝ շղթայուած, այսօր ինքնավար,
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ

ԱՆՈՒՆ

Միութիւնը կը կոչուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն՝ Հ.Մ.Ը.Մ. եւ սկառուտներ:

ՆՊԱՏԱԿ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) նպատակն է պատրաստել ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ,

Ա. Սորվեցնելով ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ,

Բ. Զարգացնելով պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատուութեան եւ պատուի զգացումներ, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի,

Գ. Համակելով միտքն ու սիրտը մարզական ազնուագոյն ոգիով:

ՄԻՋՈՑՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ըր նպատակը կ'իրագործէ՝

Ա. Սկաուտութեամբ,

Բ. Ընդհանուր մարմնակրթանքով եւ մարզախաղերով,

Գ. Դասախօսութիւններով եւ հրապարակային ձեռնարկներով,

Դ. Հրատարակութիւններով,

Ե. Ակումբներով եւ մարզարաններով:



ՆԵՐԱԾԱԿԱՆ

Միութիւն մը կազմակերպուած ամբողջութիւն մըն է միեւնոյն ուղղութիւնը եւ առաջադրանքները ունեցող մարդոց:

Ազգային, գաղափարական, մարզական, սկաուտական, ընկերային մեծ ծրագիրներ կարելի չէ իրականացնել իրարմէ անջատ եւ անկախ աշխատող անհատներու ցրուած ճիգերով: Ահա թէ ինչու հիմնական միեւնոյն նպատակներն ու գործելակերպը ունեցող անհատներ քով-քովի կու գան, կը համադրեն իրենց ճիգերը՝ միասնաբար հասնելու իրենց հաւաքական առաջադրանքներուն: Այս ձեւով է, որ կը կազմուին միութիւնները:

Պարզ է, անշուշտ, որ մեկնակետը կ'ըլլայ միշտ՝ որոշ իտեալ մը ունեցող, նպատակի մը իրականացման ձգտող նուիրեալներու կորիզ մը, որոնք իրենց շունչով եւ հաւատքով կը վարակեն բազմութիւնները, ինչպէս ըրին Շաւարշ Քրիսեանները, Վահան Չերազները, Գրիգոր Յակոբեանները, Յովհաննէս Յինդլեանները, Սիրունիները, Խոյեանները, Քաջունի եղբայրները եւ ուրիշներ:

ԻՆՉՈ՞Ւ Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ ԲԼԼԱԼ

Մարզախաղը՝ *սփորը* քաշողական է երիտասարդներուն համար:

Պետութիւններ մեծ կարելորութիւն կու տան *սփորին* եւ կ'աշխատին *սփորի* ճամբով կրթել երիտա-

սարդութիւնը՝ հոգեպէս եւ մարմնապէս: Անոնք կը տրամադրեն մեծագումար պիտօճէներ: *Սփորը* կը պատրաստէ առողջ, նկարագրի տէր, մաքուր երիտասարդութիւն: Մարզական մրցակցութիւնը, մրցանիշ կտրելու, յաղթելու, ինքզինք բարելաւելու ճիգը կը թրծէ կամքը, կ'ամրացնէ դժուարութիւնները, յաղթահարելու ոգին, կու տայ յաղթանակի խանդավառութիւնը, կեանքը առանց ճնշուածութեան, ազատօրէն ապրելու հոգեկան պատրաստութիւնը:

Մեր ժողովուրդին համար շատ կենսական է մարզանքը եւ մարզախաղը՝ այլ խօսքով՝ *սփորը*, որուն հայերէն ճշգրիտ բառը իր ամբողջ իմաստով դժուար է գտնել:

Այս պատճառով է, որ Հ.Ս.Ը.Մ.ի հիմնադիրները, յատկապէս՝ Շաւարշ Քրիսեան մեծ կարելորութիւն ընծայեցին անոր: Պայքար տարին թերթով, դասախօսութիւններով, որպէսզի *սփորը* կիրարկուի, դպրոցներէն ներս, որպէսզի իգական սեռն ալ հետեւի *սփորին*: Ամբողջական է *սփորին* բարերար ազդեցութիւնը: Հ.Ս.Ը.Մ.ն ալ զարկ կու տայ *սփորին*, առանց ունենալու պետութիւններու նիւթական միջոցները:

Մարզական խումբի մը մաս կազմելով, Հ.Ս.Ը.Մ.ական մարզիկը կը մեծնայ ընկերային առողջ մթնոլորտի մէջ:

Սկառուտութիւն եւ *սփոր*: Ահա Հ.Ս.Ը.Մ.ի զոյգ թելերը, որոնցմով կը թրծուի Հ.Ս.Ը.Մ.ական սկառուտը եւ Հ.Ս.Ը.Մ.ական մարզիկը, կը բարձրանայ, բարձրացընելու համար իր շրջապատը, իր ժողովուրդը:

Հ.Ս.Ը.Մ.ի պատկանելիութեան գիտակցութիւնը ամուր պէտք է ըլլայ իւրաքանչիւր Հ.Ս.Ը.Մ.ականի

մօտ, ըլլայ ան սկառուտ, մարզիկ, պատասխանատու անդամ կամ պարզ անդամ:

Այս գիտակցութիւնն է, որ կը զօրացնէ Հ.Ս.Ը.Ս.ը, զայն անելի կազմակերպ, աշխոյժ եւ գործօն կը դարձնէ:


Պատկանելիութեան գիտակցութիւն կը նշանակէ գիտնալ, թէ ինչո՞ւ Հ.Ս.Ը.Ս.ական ենք, ի՞նչ ստանալու եկած ենք Հ.Ս.Ը.Ս.էն եւ ի՞նչ տալու եկած ենք մեր միութեան:

Բաւարար չէ ունենալ միայն պատկանելիութեան գիտակցութիւն, այլ պէտք է սիրել Հ.Ս.Ը.Ս.ը, խանդավառուիլ անով, քաջալերել անոր ձեռնարկները, ծափահարել եւ յուզուիլ անոր տողանցքներով, հպարտանալ Հ.Ս.Ը.Ս.ով:

Հ.Ս.Ը.Ս.Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներուն (1914-1918), երբ Արեւմտահայաստանի հայութիւնը տեղահանուեցաւ եւ տարագրութեան ճամբաներուն վրայ կէսէն անելին ջարդուեցաւ, Պոլսոյ հայութիւնը համեմատաբար անելի ապահով կեանք մը ապրեցաւ: Պատերազմը հազիւ անարտած՝ զինադադար յայտարարուեցաւ 11 Նոյեմբեր 1918ին: Հայ գաղթականներ սկսան վերադառնալ իրենց գիւղերն ու քաղաքները եւ մաս մըն ալ՝ Պոլիս:

Հ.Մ.Բ.Մ.Ի ԾՆՈՒՆԴԸ



Յովհաննես Հինդլեան Շաւարշ Քրիսեան Գրիգոր Յակոբեան

Շաւարշ Քրիսեանի եւ իր «Մարմնամարզ» թերթին շունչով մեծցած խումբ մը երիտասարդներ չէին կրնար անտարբեր մնալ ի տես՝ Պոլիս հաւաքուած գաղթականներուն ու որբերուն, որոնք սկսած էին հաւաքուիլ եկեղեցիներու շրջափակերուն կամ որբանոցներուն մէջ: Պէտք էր օգնութեան հասնիլ անոնց, մասնաւորաբար զբաղիլ անոնց մարմնական առողջութեամբ: Անհրաժեշտ էր այդ պատանիներէն ապագայ հայ մարդը պատրաստել՝ առողջ ու ամուր նկարագիրով:

Հինգշաբթի, 16 Նոյեմբեր 1918ին, Գրիգոր Յակոբեան իր գրասենեակին մէջ կը հրաւիրէ խորհրդակցութեան մը: Այդ ժողովին կ'որոշուի հիմնել Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն եւ Սկաուտներ միութիւնը, որուն ջատագովը եւ գաղափարախօսը եղած էր Շաւարշ Քրիսեան՝ իր «Մարմնամարզ»ին միջոցով, ամբողջ չորս տարի (1911-1915):

Քրիստեանի ցանած սերմերը կը ծլարձակին: Շուտով կը կազմուի Կեդրոնական Վարչութիւն հետեւեալներէ՝ Գրիգոր Յակոբեան (ատենապետ), Տիգրան Խոյեան (ատենադպիր), Լեւոն Յակոբեան, Յայկ Եիզնէճեան, Գարլօ Շահինեան, Վահրամ Փափազեան եւ Ժիրայր Խորասանճեան (խորհրդականներ): Այս կազմին գործակից եղած են Յովհաննէս Հինդլեան եւ Գրիգոր Մերճանօֆ:

Միութեան առաջին կոչը կը յանձնուի մամուլին: Կը կազմակերպուին երիտասարդական հաւաքներ: Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչները կը պարզեն նոր կազմուած միութեան հետապնդած նպատակները եւ կը հրաւիրեն երիտասարդութիւնը կազմելու մասնաճիւղեր բոլոր թաղամասերու մէջ:

Այս կոչերը անարձագանգ չեն մնար եւ իրարու ետեւէ կը կազմուին մասնաճիւղեր:

3. Ե. Սիրունի կը պատրաստէ միութեան ծրագիր-կանոնագիրը: Դեկտեմբեր 1918ին, Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը կը վաւերացնէ Հ.Մ.Ը.Ս.ի ծրագիր-կանոնագիրը:

28 Հոկտեմբեր 1919ին, Հ.Մ.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ կը հրատարակուի «Հայ Սկաուտ» թերթը՝ Կարօ Ուշագլեանի խմբագրութեամբ:

9 Մայիս 1920ին, Եսայեան վարժարանին մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Ս.ի առաջին Պատգամաւորական Ժողովը:

Հ.Մ.Ը.Ս.ը պէտք ունէր նշանաբանի մը: Սկաուտներու նշանաբանը «Միշտ Պատրաստ» լաւապէս չէր պարփակեր Հ.Մ.Ը.Ս.ի նպատակը: Յայտնի թուաբա-

նագէտ Պետրոս Ատրունի կ'առաջարկէ «Բարձրացի՛ր-Բարձրացուր» նշանաբանը: Կ'ընդունուի բոլորին կողմէ եւ կը դառնայ Զ.Ս.Ը.Ս.ի նշանաբանը:

Հ.Ս.Ը.Ս.Ը ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՆԵՐՍ

Պոլսոյ մէջ հիմնուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ունեցաւ հազիւ չորս տարուան կեանք մը, որուն ընթացքին առաւելաբար զբաղեցաւ Հայրենիքի կարիքներով եւ որբերու խնամքով, քան՝ մարզական շարժումով: Ամէն պարագայի, Զ.Ս.Ը.Ս.ի վարիչները չեն վարանիր նոր ակօսներ բանալու իրենց արդէն իսկ ընդարձակ գործունէութեան դաշտին մէջ: Ներկայ են եւ կը գործեն ամէն տեղ, սակայն այս անգամ ուժերու առաւելագոյն լարումով՝ օգնելու Հայաստանի որբերուն, հայկական բանակին ու մարմնակրթանքի զարգացման:

Ընդառաջելով Հայաստանի կրթական նախարարի կոչին, երեք նուիրեալներ՝ Վահան Չերազ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ Եազմաճեան, 26 Յուլիս 1920ին կը մեկնին դէպի Հայաստան:

Այդ օրերուն, Հայաստանի երիտասարդութեան մեծ տոկոսը կը գտնուէր ռազմաճակատի դիրքերուն վրայ: Որբանոցները իրենց բախտին ձգուած էին: Ահա՛ այդ պարտականութիւնն էր, զոր կը վերցնէր Զ.Ս.Ը.Ս.ը, կազմակերպելով որբանոցներու ներքին կեանքը:

Թուրք եւ հայ բախումներու օրերուն, Զ.Ս.Ը.Ս.ի «կամաւոր զինուորներ»ը մէկէ աւելի ճակատներու վրայ կ'օգնեն հայկական բանակին, իբրեւ սուրհան-

դակ, մթերանոցի պահակ, մատակարար, դրօշախօս, կարմիր խաչ եւ այլն:

1922ին, Պոլսոյ եւ գաւառներուն մէջ կացութիւնը յեղաշրջուած էր: Քենալական շարժումը տէր դարձած էր երկրին ու հիմնած՝ թրքական հանրապետութիւն: Տարագրութեան սարսափը տակաւին չմոռցած՝ արեւմտահայ ժողովուրդը դարձեալ կը վերցնէ գաղթականի ցուպը:

16 Սեպտեմբեր 1922ին, Պոլսոյ Կեդրոնական Վարչութիւնը կը գումարէ իր վերջին նիստը եւ կ'որոշէ Թուրքիոյ մէջ լուծուած յայտարարել Միութիւնը: Այնուհետեւ, իբրեւ հարազատ գաւակը իր ժողովուրդին, կը հետեւի անոր՝ Սփիւռքի մէջ շարունակելու հայապահպանումի նուիրական իր առաքելութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ը ՍՓԻՒՌՔԻ ՄԷՉ

Գաղթական հայեր կը հաստատուին հիւրընկալ երկիրներ՝ Սուրիա, Լիբանան, Յորդանան, Իրաք, Պաղեստին, Եգիպտոս, Յունաստան, Պուլկարիա, Ռումանիա եւ Ֆրանսա:

Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին մասնաճիւղը կը հիմնուի Պէյրութի մէջ 1924ին: Երկրորդը՝ Դամասկոսի մէջ, 1925ին: Երրորդը՝ Յալէպի մէջ, 1925ին: Չորրորդը՝ Ջահլէի մէջ, 1927ին: Այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ.ական շարժումը շուտով կը դառնայ վարակիչ:

Քաջալերուած խանդավառիչ այս երեւոյթէն, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի, Յալէպի, Դամասկոսի եւ Ջահլէի

ղեկավար մարմինները կ'որոշեն միասնաբար խորհրդակցութեան մը նստիլ՝ քննելու համար շրջանները կազմակերպելու կարելիութիւնները, մշակելու միութեան ներքին ծրագիր-կանոնագիրին նախագիծը եւ ընտրելու առաջին գործադիր մարմինը՝ Շրջանային Վարչութիւնը:

Այս պատմական խորհրդակցութիւնը տեղի կ'ունենայ Պէյրութի մէջ, 1929ին եւ այս կ'ըլլայ Հ.Ս.Ը.Ս.ի Մերձաւոր Արեւելքի Առաջին Պատգամաւորական Ժողովը:

Այնուհետեւ, Պատգամաւորական Ժողովները տեղի կ'ունենան Պէյրութի եւ երբեմն ալ՝ Հալէպի մէջ, երկու տարին անգամ մը:

Հ.Ս.Ը.Ս. ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

1973ին, Հ.Ս.Ը.Ս.ի Մերձաւոր Արեւելքի 20րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը նկատի ունենալով Հ.Ս.Ը.Ս.ի տարածումը, յատկապէս Հիւսիսային Ամերիկայի եւ Աւստրալիոյ մէջ նոր մասնաճիւղերու հիմնումը, կ'որոշէ Հ.Ս.Ը.Ս.ը համագաղութային կազմակերպութեան մը վերածել:

Գործնականացնելով այս որոշումը, նախապատրաստական աշխատանքներ տանելու եւ ծրագիր-կանոնագիր մշակելու համար կ'ընտրէ եռանդամ մարմին մը, որ կը բաղկանայ Վարդգէս Տէր Կարապետեանէ՝ ատենապետ, Հրանդ Մուրատեանէ՝ ատենադպիր եւ Նշան Թիւսիւզեանէ՝ գանձապահ:

13 Դեկտեմբեր 1974ին, եռանդամ մարմնի հրաւերով, Պէյրութի (Լիբանան) մէջ կը գումարուի Հ.Ս.Ը.-

Մ.ի Պատգամաւորական Ա. Ընդհանուր ժողովը, 28 մասնաճիւղերու ներկայացուցիչներով:

Այնուհետեւ կը գումարուին 7 այլ Պատգամաւորական ժողովներ.-

●Բ. Պատգամաւորական ժողով (Նիկոսիա, 6-8 Ապրիլ 1979) - 46 մասնաճիւղ:

●Գ. Պատգամաւորական ժողով (Աթէնք, 14-17 Ապրիլ 1983) - 55 մասնաճիւղ:

●Դ. Պատգամաւորական ժողով (Աթէնք, 17-20 Ապրիլ 1987) - 57 մասնաճիւղ:

●Ե. Պատգամաւորական ժողով (Աթէնք, 29 Մարտ - 3 Ապրիլ 1991) - 62 մասնաճիւղ: Ժողովին առաջին անգամ ըլլալով կը մասնակցին Հ.Ս.Ը.Ս.ի Հայաստանի կազմակերպութեան ներկայացուցիչները:

●Զ. Պատգամաւորական ժողով (Պէյրուս, 11-17 Ապրիլ 1995) - 83 մասնաճիւղ:

●Է. Պատգամաւորական ժողով (Պէյրուս, 31 Մարտ - 5 Ապրիլ 1999) - 87 մասնաճիւղ:

●Ը. Պատգամաւորական ժողով (Ծաղկաձոր, 4-7 Յունիս 2003) - 90 մասնաճիւղ: Ժողովին առաջին անգամ ըլլալով կը մասնակցի Հ.Ս.Ը.Ս.ի Զաւախքի կազմակերպութեան ներկայացուցիչը:

ՄԻՋ-ԴԻԻԱՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐ

Ա. Խորհրդաժողով- 5-7 Ապրիլ 1985, Միլանո, Իտալիա:

Բ. Խորհրդաժողով- 24-27 Մարտ 1989, Լոնտոն, Անգլիա:

Գ. Խորհրդաժողով- 13-16 Յունիս 1993, Լաւալ, Քանատա:

Դ. Խորհրդաժողով- 26-28 Մարտ 1997, Փարիզ, Ֆրանսա:

Ե. Խորհրդաժողով- 13-15 Օգոստոս 2001, Պէյրուօ, Լիբանան:

Զ. Խորհրդաժողով- 1-3 Օգոստոս 2005, Աթէնք, Յունաստան

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ

Ցարդ տեղի ունեցած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական 6 մարզախաղեր.-

● *Ա. մարզախաղեր* (Պասքեթպոլի մրցաշարք)

Թորոնթօ եւ Մոնթրէալ, 26 Յունիս - 5 Յուլիս 1981:

● *Բ. մարզախաղեր* (Ֆուլթպոլի մրցաշարք)

Լոս Անձելըս, 2-7 Յուլիս 1985:

● *Գ. մարզախաղեր* (Պասքեթպոլի տղոց մրցաշարք)

Վալանս, 12-16 Ապրիլ 1990:

● *Դ. մարզախաղեր* (Ֆուլթպոլի եւ աթլետիզմի մրցաշարք)

Թորոնթօ եւ Մոնթրէալ, 9-18 Յուլիս 1993:

● *Ե. մարզախաղեր* (Պասքեթպոլի եւ վոլիպոլի տղոց ու աղջկանց մրցաշարք)

Ֆիլատելֆիա եւ Նիւ Գրրզի, 31 Յուլիս -

10 Օգոստոս 1997:

● *Զ. մարզախաղեր* (Ֆուլթպոլի, աթլետիզմի եւ փինկ-փոնկի մրցաշարք)

Պէյրուօ, 11-16 Օգոստոս 2001:

2005ին տեղին կ'ունենան Է. մարզախաղերը (Պասքեթպոլի, վոլիպոլի եւ լողի մրցաշարք)

Աթէնք, 24-31 Յուլիս 2005:

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցին ստեղծու-
մեն ի վեր տեղի ունեցած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական 7
բանակումներ՝ հետեւեալ կարգով.-

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ա. Ընդհ. Բանակում - 1-
13 Օգոստոս 1978, Քալամոս (Յունաստան): Մաս-
նակցութիւն՝ 12 շրջանէ 226 արի-արեւոյշներ:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Բ. Ընդհ. Բանակում -
14-26 Օգոստոս 1980, Քլամար (Ֆրանսա), Մասնակ-
ցութիւն՝ 12 շրջանէ 291 արի-արեւոյշներ:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ. Ընդհ. Բանակում -
10-20 Օգոստոս 1986, Չալֆոնթ Յայթց (Անգլիա),
Մասնակցութիւն՝ 11 շրջանէ 269 արի-արեւոյշներ:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դ. Ընդհ. Բանակում -
21-31 Օգոստոս 1990, Այա Մարինա (Յունաստան):
Մասնակցութիւն՝ 14 շրջանէ 484 արի-արեւոյշներ:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. Ընդհ. Բանակում - 27
Յուլիս-7 Օգոստոս 1994, Բիւրական (Հայաստան):
Մասնակցութիւն՝ 14 շրջանէ 432 արի-արեւոյշներ:

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զ. Ընդհ. Բանակում -
12-21 Յուլիս 1998, Աղաւնաձոր (Հայաստան): Մաս-
նակցութիւն՝ 19 շրջանէ 715 արի-արեւոյշներ (24ը
հիւրաբար՝ Իրանի Հայ Մշակութային «Արարատ»
Կազմակերպութենէն եւ Հայ Մշակութային «Սիփան»
միութենէն):

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Է. Ընդհ. Բանակում - 27
Յուլիս-4 Օգոստոս 2002, Բիւրական (Հայաստան):

Մասնակցութիւն՝ 17 շրջանէ 510 արի-արենոյշներ (31ը հիւրաբար՝ Իրանի Հայ Մշակութային«Արարատ» Կազմակերպութենէն եւ «Սիփան», «Նայիրի» մշակութային միութիւններէն):

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՍԿԱՌՒՏԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտական խմբապետական Ա. համագումար - 18-21 Փետր. 1982, Աթէնք (Յունաստան): Մասնակցութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի 53 մասնաճիւղերը ներկայացնող 42 սկառուտ խմբապետներու եւ խորհուրդներու ներկայացուցիչներու:

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտական խմբապետական Բ. համագումար - 26 Յունիս-5 Յուլիս 1988, Քալիֆորնիա (Ամերիկա): Մասնակցութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի 62 մասնաճիւղերը ներկայացնող 32 խմբապետ-խմբապետուհիներու:

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտական Գ. համագումար - 14-23 Դեկտ. 1996, Սիտնի (Աւստրալիա): Մասնակցութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի 55 մասնաճիւղերը ներկայացնող 24 խմբապետ-խմբապետուհիներու:

● Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դ. համագումար - 9-14 Օգոստոս 2004ին, Ծաղկաձոր (Հայաստան): Մասնակցութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի 91 մասնաճիւղերը ներկայացնող 24 խմբապետ-խմբապետուհիներու:

Հ.Մ.Ը.Մ.Ը ԿԸ ՎԵՐԱԴԱԴԱՌՆԱՅ ԵՐ Կ Ի Ր

70 տարուան ակամայ բացակայութենէ ետք, 1989էն սկսեալ, Հ.Մ.Ը.Մ.ի բջիջներ կը գործեն Երեւանի մէջ:

Հայաստանի հողին վրայ Հ.Մ.Ը.Մ.ական առաջին բանակունը կազմակերպելու պատիւը կ'երթայ Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի մասնաճիւղին:

1990-1991.- Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր կը ստեղծուին Հայաստանի զանազան շրջաններուն մէջ:

Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի շրջանը կը մասնակցի Միութեան 5րդ Պատգամաւորական Ժողովին: Հայաստանէն եղբ. Վարդան Բախշեան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

1992.- Կը պատրաստուի Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի սկաուտութեան կանոնագրութիւնը եւ Միութեան ծրագիր-կանոնագիրին հետ կը յղուի Հ.Մ. Շարժումի Բիւրոյին:

1993.- Հ.Մ. Շարժումի Բիւրոյին կը ներկայացուի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան կանոնագրութիւնը, որ կարգ մը պատշաճեցումներէ ետք կ'ընդունուի, սա-

կայն հարց կը ստեղծէ Զ.Ս.Ը.Ս.ի անունը, որ երկրի մը սկաուտութեան անունը ըլլալու փոխարէն՝ Միութեան մը սկաուտութեան անունը կը ներկայացնէր:

1995, Ապրիլ.- Զ.Ս.Ը.Ս.ի Զ. Պատգամաւորական ժողովը կ'որոշէ Զ.Ս.Ը.Ս.ի Զայաստանի սկաուտութիւնը կոչել Զայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն (Զ.Ա.Ս.Կ.) եւ թափ տալ Զ.Ս. Շարժումի անդամակցութեան անոր ճիգերուն:

1995, Մայիս 29.- Զ.Ս.Ը.Ս.ի Զայաստանի սկաուտութիւնը արդարադատութեան նախարարութեան մօտ կ'արձանագրուի Զայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն (Զ.Ա.Ս.Կ.) անունով:

1996, Յունիս 23.- Ա.Պ.Յ. երկիրներու առաջին բանակումին, Ծաղկածոր, Ֆրանսայի «Զայ Արիներ» կազմակերպութեան ներկայացուցիչը Զ.Ա.Ս.Կ.ին կը փոխանցէ համաշխարհային սկաուտութեան ներկայացուցչութեան ջահը:

1997, Ապրիլ 17.- Զ.Ս. Շարժումի Բիւրոն պաշտօնապէս կ'ընդունի Զ.Ա.Ս.Կ.ի անդամակցութիւնը իր Շարժումին:

1998, Ապրիլ 22-23.- Երեւանի մէջ կը գումարուի սկաուտական եւրօ-ասիական բաժանմունքին հիմնադիր ժողովը: Զ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Յարութ Յարութիւնեան կ'ընտրուի բաժանմունքի նախագահ:

1999, Յունիս 26.- Զ.Ս. Շարժումի 35րդ համագումարը Զ.Ա.Ս.Կ.ին կը շնորհէ Շարժումին անդամակցութեան պաշտօնական վկայականը:

ՎԱՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՅՑ

Ա. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղերուն պահպանումը, միութենական, սկաուտական եւ մարզական կեանքին կազմակերպումը կ'ենթադրէ մեծ աշխատանք, որուն կը լծուին կարելոր թիւով անդամներ:

Հ.Ս.Ը.Մ.ի ընդհանուր կեանքը դասաւորուած է իր կանոնագիրով: Ընդհանուր կանոնագիր՝ համագաղութային կառոյցին համար, ներքին կանոնագիրներ՝ Շրջաններուն եւ Մեկուսի շրջաններուն համար:

Կանոնագրային տրամադրութիւնները կը ճշդեն իւրաքանչիւր մարմինին իրաւասութիւնները, պարտաւորութիւնները, մարմինէ մարմին յարաբերութիւնները, ժողովներուն եւ մարմիններուն պարտաւորութիւնները:

Հ.Ս.Ը.Մ. իր հիմնադրութեան օրէն միացուցած է սկաուտութիւնը եւ մարզական կեանքը՝ *սփորը*: Այս զոյգ գործունէութիւնները առանց խաչաձեւումի, ներդաշնակ ձեւով կը տարուին, բայց եւ այնպէս անոնց մղիչ ուժը կը հանդիսանայ վարչութիւնը: Մասնաճիւղի վարչութիւնը՝ մասնաճիւղի մակարդակով, Շրջանային վարչութիւնը՝ շրջանային եւ Կեդրոնական վարչութիւնը՝ համա-Հ.Ս.Ը.Մ.ական մակարդակով:

Հ.Մ.Ը.Մ. ձեւով մը պետական գործ կը տանի, առանց ունենալու պետական նիւթական եւ այլ միջոցներ: Հ.Մ.Ը.Մ. պաշտօնեայ վարչականներ չունի, որոնք ստանձնած ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի գործին վարչական կազմակերպումը: Անոնք կ'ընտրուին ժողովներու կողմէ, որոշ ժամանակաշրջանի մը համար: Կրնայ ըլլալ, որ որոշ գործեր յանձնուած ըլլան անձերու իբրեւ պաշտօնեայ, որոնք իրենց աշխատանքին համար վարձատրութիւն կը ստանան:

Ընտրութեամբ վարչական պաշտօն ստանձնող Հ.Մ.Ը.Մ.ականները մեծ պարտաւորութիւններ եւ պատասխանատուութիւններ ունին հանդէպ սկաւտներուն, մարզիկներուն, անդամներուն, Հ.Մ.Ը.Մ.ին եւ հայ ժողովուրդին:

Հաւաքական աշխատանք է Հ.Մ.Ը.Մ.ի գործը:

Գործող հաւաքականութիւններու մէջ գոյութիւն ունին համակրանքներ եւ հակակրանքներ, սակայն այս երեւոյթը պէտք չէ անհանդուրժողութեան վերածուի:

Ամէն տեղ պէտք է տիրէ գործակցութեան ոգին:

Կարծիքները, անձնական ընբռնումները տեսակետներ են եւ երբեք՝ պարտադրանք: Կարծիքներու գումարը միայն կը վերածուի որոշումի, գործադրելի բոլորին կողմէ:

Այս ձեւով Հ.Մ.Ը.Մ. լիովին կը կատարէ իր դերը եւ կը տարածուի, կը շահի նոր վարկ եւ վստահութիւն, կը բարձրանայ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը, աւելի վեր, աւելի բարձր:

Մեր բոլոր ճիգերը կը ձգտին մէկ նպատակի, հայը հայ պահել, հայը յանձնառու դարձնել, հայը աւելի գործունեայ եւ աշխատող դարձնել:

Այս գիտակցութիւնը առկայ պէտք է ըլլայ մեր բոլոր մտածումներուն, ծրագիրներուն եւ աշխատանքներուն մէջ:

Բ. ԱՆԴԱՄ

Ինչպէս որեւէ կազմակերպութիւն, նոյնպէս Հ.Ս.Ը.Մ.ի պարագային, անդամը կը կազմէ այդ կազմակերպութեան բջիջը՝ միաւորը: Եթէ առողջ է այդ բջիջը՝ հետեւաբար առողջ է մարմինը, այսինքն՝ կազմակերպութիւնը:

Ամէն հայ անհատ կրնայ անդամակցիլ Հ.Ս.Ը.Մ.ին, երբ կ'ընդունի միութեան ծրագիր-կանոնագիրը եւ կ'ենթարկուի անոր կանոններուն եւ որոշումներուն:

Հ.Ս.Ը.Մ.ի ընդհանուր կանոնագիրը յստակօրէն կը ճշդէ միութեան անդամակցութեան պայմաններն ու պարտաւորութիւնները, սակայն այդ պայմաններուն մէջ կայ հիմնական պայման մը, որ կ'ակնկալէ անդամէ մը՝ կատարելու իր նիւթական եւ բարոյական պարտաւորութիւնները հանդէպ իր միութեան: Վերոյիշեալ պարտաւորութեան գործադրութիւնն է, որ կը ճշդէ բջիջի մը, այսինքն անդամի մը առողջ կամ վատառողջ ըլլալը:

Գ. ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Ս.Ը.Մ.ի ընդհանուր կանոնագիրով յստակօրէն ճշդուած են այն ժողովները, որոնք կ'ընտրեն համապատասխան վարչութիւններ:

1. ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նուազագոյնը 18 տարիքը բոլորած 15 անդամներ կը կազմեն մասնաճիւղ, կը գումարեն անդամական ընդհանուր ժողով եւ կ'ընտրեն մասնաճիւղի վարչութիւն կամ Շրջանային Ներկայացուցչական ժողովին ներկայացուցիչներ: Մասնաճիւղի ժողովներուն կը քննարկուի շրջանաւարտ վարչութեան գործունէութիւնը, կը կազմուի յառաջիկայ տարեշրջանի նախահաշիւը, հիմ ունենալով նորընտիր վարչութեան գործունէութեան ուղեգիծը:

2. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Անդամական ընդհանուր ժողովներէ ընտրուած ներկայացուցիչներու մասնակցութեամբ, Շրջանային Ներկայացուցչական ժողովը կը գումարուի երկու տարին անգամ մը: Ժողովը կը քննէ շրջանաւարտ Շրջանային Վարչութեան նիւթաբարոյական երկամեայ տեղեկագիրը, կը քննարկէ զայն, կը հանէ համապատասխան բանաձեւեր, կ'ընտրէ նոր Շրջանային Վարչութիւն երկու տարուան համար՝ 5, 7, 9 կամ 11 անդամներէ բաղկացած:

Այս ժողովին է, որ կ'ընտրուին Հ.Ս.Ը.Ս.ի Պատգամաւորական Ընդհանուր ժողովի պատգամաւորներ, կանոնագիրով ճշդուած իրաւունքի հիման վրայ:

Շրջանային ժողովին կ'առաջարկուի յառաջիկայ շրջանի գործունէութեան ուղեգիծ եւ կը պատրաստուի համապատասխան նախահաշիւ:

Վերոյիշեալ ժողովին կը մասնակցին մասնաճիւղերու վարչութեանց ներկայացուցիչներ, համապա-

տասխան՝ կանոնագիրով ճշդուած իրենց անդամական թիւին: Ասոնց կողքին, ժողովին կը մասնակցին նաեւ կանոնագիրով ճշդուած խորհրդակցական ձայնով ժողովականներ:

3. ՊԱՏՉԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պատգամաւորական Ընդհանուր ժողովը Յ.Ս.Ը.Ս.ի գերագոյն ժողովն է, որ կը գումարուի 4 տարին անգամ մը:

Վերոյիշեալ ժողովին կը մասնակցին Շրջանային եւ Սեկուսի շրջաններէ ընտրուած լիազօր պատգամաւորներ, համաձայն կանոնագիրով ճշդուած իրենց անդամական պատկերին: Այս ժողովին կը մասնակցին նաեւ խորհրդակցական ձայնով ժողովականներ, որոնք առնուազն տասը տարուան անդամ եղած են միութեան:

Պատգամաւորական Ընդհանուր ժողովը.-

ա. Կը լսէ, կը գնահատէ շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան նիւթաբարոյական քառամեայ գործունէութեան տեղեկագիրը:

բ. Կը լսէ Շրջանային եւ Սեկուսի շրջաններու վարչութիւններու քառամեայ գործունէութեան ամփոփ տեղեկագիրը:

գ. Կը պատրաստէ նախահաշիւ եւ կը կազմէ յառաջիկայ քառամեակի գործունէութեան նախագիծ:

դ. Ի հարկին, կը վերամշակէ միութեան ընդհանուր կանոնագիրը:

ե. Կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւն՝ բաղկացած 7, 9, 11 կամ 13 անդամներէ, 4 տարուան համար:

Դ. ՎԱՐՉԱԿԱՆ ՆԻՍՏ

1. Վարչութիւնը կը գործէ գումարելով հերթական նիստեր: Նիստերուն կը քննուին միութեան վերաբերող հարցեր, կը լսուին զեկուցումներ, կը կարդացուին ստացուած նամակներ եւ գրութիւններ, կը նշանակուին պատասխանատու անձեր եւ կազմեր, կը տրուին որոշումներ, եւայլն:

2. Վարչութեան գործը համապատասխան պէտք է ըլլայ Հ.Ս.Ը.Ս.ի ընդհանուր ծրագիր-կանոնագրին, միութեան ընդհանուր ուղեգիծին, Հ.Ս.Ը.Ս.ի Ընդհանուր ժողովին, ինչպէս նաեւ զինք ընտրած ժողովին, գերադաս ժողովին եւ գերադաս վարչութիւններու որոշումներուն:

Վարչութեան գործելակերպը համապատասխան պէտք է ըլլայ ընդհանուր եւ ներքին կանոնագրութիւններուն, ժողովական եւ վարչական կանոններուն, գերադաս ժողովներու եւ վարչութիւններու որոշումներուն:

Վարչութեան գործը եւ գործելակերպը համապատասխան պէտք է ըլլան Հ.Ս.Ը.Ս.ի ոգիին:

3. Վարչութիւնը կ'որոշէ իր հերթական նիստերու գումարման օրը, ժամը, վայրը եւ տեւողութիւնը:

4. Վարչականները կրնան դիւանի ներկայացուցած օրակարգին վրայ աւելցնել նոր կէտեր:

5. Օրակարգին մնայուն կէտերն են՝

- Նախորդ նիստի ատենագրութեան ընթերցում եւ վաւերացում,
- Ատենագրութենէն բխած հարցեր,
- Կատարուած աշխատանքներու շուրջ զեկուցումներ,

● Գերադաս վարչութիւններէ ստացուած նամակներ եւ շրջաբերականներ:

6. Նիստը օրինաւոր է, երբ ներկայ է վարչականներու մեծամասնութիւնը:

7. Վարչութեան որոշումները կը տրուին ձայներու պարզ մեծամասնութեամբ:

8. Տրուած որոշում մը կարելի է վերաքննութեան ենթարկել՝ ձայներու երկու երրորդով: Զայն փոխարինող որոշումը կ'առնուի պարզ մեծամասնութեամբ:

9. Ժողովական մը խօսք կ'առնէ ատենապետէն ձայն ստանալէ ետք: Այլ ժողովական մը չի կրնար ընդմիջում կատարել: Շեղումի պարագային, ատենապետը զայն կրնայ կարգի հրաւիրել, իսկ ժողովական մը կրնայ «ըստ կարգի» յիշեցում կատարել:

Վարչականներ

Նորակազմ իւրաքանչիւր վարչութիւն իր առաջին նիստին կ'ընտրէ դիւան եւ կը կատարէ աշխատանքի բաժանում իր անդամներուն միջեւ: Մեծ է պատասխանատուութիւնը իւրաքանչիւր վարչականի անհիկա ըլլայ մարզական, սկաուտական, ընկերային, դաստիարակչական, տնտեսական թէ յարաբերական մարդերուն մէջ:

Ա. Ատենապետը՝

1. Կը վարէ վարչական նիստերը, կը պահէ ժողովին կարգն ու կանոնը, հերթով ձայն կու տայ խօսք առնողներուն:

2. Ան վարչութեան ներկայացուցիչն է եւ նախան-

ծախանդիր կ'ըլլայ գործադրելու վարչական որոշումները:

3. Նիստի օրերին դուրս կը վարէ ընթացիկ աշխատանքներ, անոնց մասին կը զեկուցէ վարչական ժողովներուն:

4. Կը տանի յարաբերական աշխատանք, բացի այն մարզերէն ներս, ուր արդէն վարչութիւնը ունի իր ներկայացուցիչը:

5. Ատենադպիրին հետ կը ստորագրէ առաքուած նամակները եւ վարչական նիստերու ատենագրութիւնները:

6. Դիւանին հետ կը պատրաստէ յառաջիկայ նիստին օրակարգը:

Բ. Ատենադպիրը՝

1. Կը պահէ նիստերու ատենագրութիւնները, կը բանաձեւէ եւ կ'արձանագրէ ժողովականներուն արտայայտութիւնները եւ որոշումները:

2. Կ'արձանագրէ նիստին թիւն ու թուականը, վայրը, բանաւոր բացականչելուն եւ բացականչելուն անունները:

3. Յաջորդ նիստին ատենագրութեան վաւերացումէն ետք կրկնօրինակը կը փոխանցէ գերադաս մարմնին:

4. Ատենագրութեան մէջ կ'արձանագրէ իրագործուած եւ իրագործուելիք աշխատանքներու մասին:

5. Առանձին օրակարգով կ'արձանագրէ ստացուած ու առաքուած նամակներն ու շրջաբերականները թիւով եւ թուականներով, սեղմ բովանդակութեամբ:

6. Ատենադպիրը կը պահէ որոշումներու տետրակ

մը, ուր կ'արձանագրուին առնուած որոշումները իրենց թուականներով եւ զանոնք գործադրողներուն անուններով:

7. Յատուկ թղթածրարներու մէջ կը պահէ ստացւած եւ առաքուած նամակներն ու շրջաբերականները:

8. Կը պատրաստէ վարչութեան շրջաբերականները, նամակները եւ զանազան գրութիւններ:

Վարչութիւնը կրնայ ունենալ պաշտօնեայ քարտուղար մը, որ կ'օգնէ ատենադպիրին եւ դիւանական աշխատանքներուն: Վարչութեան արտօնութեամբ ան կրնայ մասնակցիլ վարչական նիստերուն առանց ձայնի իրաւասութեան:

Գ. Գանձապահը՝

1. Կը կատարէ վարչութեան գանձումներն ու վճարումները, համապատասխան ստացագիրներով: Կը կատարէ նաեւ դրամատնային գործողութիւններ, միշտ արտօնեալ երեք անդամներէ երկուքի ստորագրութեամբ: Տեղեակ կը պահէ վարչութիւնը, միութեան տնտեսական վիճակին մասին:

2. Օրը-օրին կ'արձանագրէ եղած նիւթական գործառնութիւնները, հաշուական տոմարի մուտքի եւ ելքի բաժիններով:

Ե. ԴԻԻԱՆԻ ՆԻՍՏ

Վերոյիշեալ երեք վարչականները կը կազմեն դիւանը:

1. Ան կ'ունենայ կանոնաւոր հերթական նիստեր:

2. Այս նիստերը կը ծառայեն պատրաստելու վարչական նիստերը, ընդունելու միութեան աշխա-

տանքներուն առնչուած անձեր, անդամներ կամ վարչականներ:

3. Կը կարդացուին ստացուած ատենագրութիւնները եւ կը ներկայացուին վարչական ժողովներուն:

4. Դիւանի նիստերուն կարելի չէ որոշում տալ:

5. Դիւանի անդամներէն զատ մնացեալ վարչականները կը կազմեն խորհրդականները, որոնց կարելի է այլազան պատասխանատուութիւններ յանձնել, ինչպէս՝ մասնաւոր առաքելութեամբ պարտականութիւններ կամ յանձնախումբերու մօտ ներկայացուցչութիւններ:

Դ. Փոխ ատենապետը՝

Ատենապետին բացակայութեան, փոխ ատենապետին կը փոխանցուին ատենապետին իրաւասութիւնները, յատկապէս ընթացիկ աշխատանքները վարելու պարտականութիւնները:

Ե. Հաշուապահը՝

1. Ան կը հետեւի գանձապահին նիւթական գործառնութեան եւ հաշուապահութեան:

2. Կը պահէ հաշուական տոմարները:

3. Վարչութեան կը ներկայացնէ պարբերական զեկուցում՝ նիւթական եւ տնտեսական կացութեան մասին:

Զ. Գոյքապահ՝

Գոյքապահը կը պահէ վարչութեան գոյքերը եւ անոնց լրիւ ցանկը, նաեւ ան իր մօտ կը կեդրոնացնէ վարչութեան ենթակայ միաւորներու ունեցած գոյքերուն ամբողջական ցանկը:

Է. Յանձնախուճբերու մօտ ներկայացուցիչներ

Վարչութիւնը իր յառաջացուցած յանձնախուճբերուն մօտ կը նշանակէ ներկայացուցիչներ, որոնք ներկայ կ'ըլլան յանձնախուճբերու նիստերուն:

Ներկայացուցիչը կը հսկէ վարչութեան կամ ժողովներու որոշումներուն անթերի գործադրութեան, խորհուրդ կու տայ եւ կը կատարէ պատշաճ թելադրանքներ: Հակառակ այն իրողութեան, որ յանձնախուճբերը կը պահեն ատենագրութիւն եւ որուն կրկնօրինակը վաւերացուելէ ետք կը փոխանցուի վարչութեան, ներկայացուցիչը կը մնայ յանձնախուճբերու եւ վարչութեան անմիջական արագ կապը:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը կը դաւանի «Առողջ միտքը, առողջ մարմնի մէջ» մարզական միջազգային կարգախօսը, միաժամանակ ան ոչ- Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկէն կը զատորոշուի իր ազգային յատուկ նկարագիրով եւ Հայաստանին ու հայութեան հանդէպ իր նուիրական պարտաւորութեամբ:

Եթէ երբեք այլ մարզիկներու նման մրցումները միայն մարզական ելոյթներ են, յաղթանակով կամ պարտութեամբ վերջացող, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի պարագային, այդ մրցումները հայ ժողովուրդի պայքարելու ոգիին ու կամքին արտայայտութիւններն են:

Արդ, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը.-

1. Հաւատարիմ է Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր-Բարձրացո՛ւր» նշանաբանին: Ան պատրաստ է անսակարկ եւ հաւատարմօրէն ծառայելու ազգին ու հայրենիքին:

2. Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը մաքուր է նկարագիրով, մտքով եւ բարոյականով:

3. Դաշտերէն ներս թէ դուրս, կարգապահ ու քաղաքավար է, միջազգային «Ֆէր փլէյ»ին տիպարն է:

4. Ան զուսպ է իր արտայայտութիւններուն կամ շարժումներուն մէջ եւ նախանձախնդիր է իր պատկանած միութեան բարոյականին:

5. Ան կը յարգէ իր պատասխանատուն կամ մարզիչը, կ'ենթարկուի անոր բոլոր ցուցմունքներուն՝ առանց այլեւայլի:

6. Սրցումներուն կը մասնակցի յաղթելու վճռակամութեամբ: Ան երբեք տկարութիւն չի ծանչնար:

7. Ան կը հաւատայ, որ մաս կը կազմէ հաւաքականութեան մը, մեծ ընտանիքի մը, որ իր կարգին կը հաւատայ հաւաքական աշխատանքի եւ համագործակցութեան սկզբունքին:

8. Յաղթանակներն ու պարտութիւնները կ'ընդունի մարզական նոյն ոգիով, վեհանձնութեամբ եւ համեստութեամբ:

9. Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին Ֆիզիքականը որքան կը պատկանի իրեն՝ նոյնքան կը պատկանի իր միութեան: Ան կը գուրգուրայ իր Ֆիզիքական առողջութեան եւ մաքրութեան՝ հեռու քանդիչ մոլութիւններէ:

10. Ան կը հաւատայ Հայաստանին եւ Հայ Դատին ու միշտ պատրաստ է զինուորագրուելու եւ ծառայելու Հայաստանին եւ հայ ժողովուրդին:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայկական լեռնաշխարհին մէջ ապրող ցեղեր դարերու ընթացքին ծուլուելով կազմած են հայ ժողովուրդը: Հայերը կը պատկանին սպիտակ ցեղի հնդեւրոպական ընտանիքին:

Հայաստանը, հայոց բնաշխարհը (Արմէնիա), այն երկիրն է, ուր հայ ժողովուրդը կազմուած ու անցած է պատմական զարգացման բոլոր փուլերէն:

Հայերէնը հայ ժողովուրդի ազգային լեզուն է: Ան կը պատկանի հնդեւրոպական լեզուներու ընտանիքին եւ կը կազմէ առանձին ճիւղ:

Հայերս կրօնքով քրիստոնեայ ենք եւ ունինք անկախ եկեղեցի, Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցին: Կան նաեւ կաթողիկէ եւ աւետարանական հայեր:

Հայ ժողովուրդի կազմաւորումը սկսած է հայկական լեռնաշխարհի արեւմտեան եւ հարաւ-արեւմըտեան շրջաններուն մէջ:

Քրիստոսէ առաջ Յրդ դարուն, Վանայ լիճին շուրջ ստեղծուեցաւ ուրարտական պետութիւնը: Ուրարտուն հզօր եւ բարձր մշակոյթ ունեցող պետութիւն էր, Տուշպա (այժմ՝ Վան) մայրաքաղաքով:

Ք.Ա. 6րդ դարուն սկիզբը, ուրարտական պետութեան անկումէն ետք, հայկական լեռնաշխարհին մէջ յառաջացան հայկական կիսանկախ պետութիւններ: Ք.Ա. 2րդ դարուն սկիզբը արդէն կային երեք անկախ պետութիւններ՝ Սեծ Հայք, Փոքր Հայք եւ Ծոփք:

Ք.Ա. 189 թուականին, ստեղծուեցաւ Արտաշէսեան թագաւորութիւնը:

Արտաշեսեան թագաւորութեան մեծագոյն դէմքը հանդիսացաւ Տիգրան Մեծ, որ գահ բարձրացաւ Ք.Ա. 95 թուականին: Ան կերտեց ընդարձակ թագաւորութիւն մը, որուն սահմանները երկարեցան Եփրատէն մինչեւ Կասպից ծով եւ Կուր գետէն մինչեւ Կորդլաց լեռներ:

Արտաշեսեան թագաւորութեան անկումէն ետք, Յայաստան ինկաւ Յռոմէական կայսրութեան իշխանութեան տակ՝ մինչեւ 64 թուականը, երբ ստեղծուեցաւ Արշակունեաց թագաւորութիւնը, որ իր գոյութիւնը պահեց շուրջ 4 դար (64-428):

301ին, հայերը քրիստոնէութիւնը հռչակեցին պետական կրօն: Գրիգոր Լուսաւորիչ եղաւ հայոց առաջին Յայրապետը, իսկ Արշակունի Տրդատ թագաւոր՝ աշխարհի առաջին քրիստոնեայ թագաւորը:

Արշակունեաց թագաւորութիւնը իր գերիշխանութիւնը երկար չպահեց: 387ին Յայաստան բաժնուեցաւ Յռոմի եւ Պարսկաստանի միջեւ: Պարսկական մասը կոչուեցաւ Արեւելեան Յայաստան, իսկ Յռոմէական մասը՝ Արեւմտեան Յայաստան:

Յայ քաղաքական կեանքին անկումը՝ Արշակունեաց թագաւորութեան բաժանումով՝ հայ ժողովուրդին մէջ յառաջացուց պահանջը ստեղծելու նոր, անբաժանելի միութիւն մը՝ ազգային մշակոյթով եւ սեփական այբուբենի ստեղծումով: 405ին, Մեսրոպ Մաշտոց հնարեց հայերէն գիրերը: Սահակ Պարթեւ կաթողիկոսի եւ Վռամշապուհ թագաւորի աջակցութեամբ ան ձեռնարկեց թարգմանչական մեծ աշխատանքի եւ իր թարգմանիչ աշակերտներուն հետ կերտեց Ե. դարու հայկական Ոսկեդարը:

Քրիստոնեութեան պետական կրօն հռչակումը եւ հայկական այբուբենի ստեղծումը մեծ անդրադարձ ունեցան հայ ժողովուրդին վրայ, որուն քաջարի գաւակները 451ին մղեցին Վարդանանց հերոսամարտը, իսկ անոր յաջորդող տասնամեակներուն, Վահան Մամիկոնեանի գլխաւորութեամբ, պարսիկներու դէմ ձեռնարկեցին ապստամբական մեծ շարժումի: 484ին, Նուարսակի դաշնագիրը հայկական ապստամբութիւնը պսակեց քաղաքական փայլուն յաղթանակով:

640ական թուականներէն ետք, Յայաստան ենթարկուեցաւ արաբական արշաւանքներու եւ անոնց լուծին տակ մնաց աւելի քան 200 տարի:

Օտար տիրապետութենէ ազատելով, 885ին Յայաստան վերագտաւ իր ազատութիւնը: Ստեղծուեցաւ Բագրատունիներու թագաւորութիւնը, որ տեւեց մինչեւ 1045 թուական: Բագրատունիները կը ձգտէին վերականգնել Արշակունեաց ժամանակաշրջանի հայկական միասնական պետութիւնը:

Դժբախտաբար, սելճուք թուրքերու աւերիչ արշաւանքները եւ Բիւզանդական կայսրութեան հակահայ քաղաքականութիւնը վերջ դրին Բագրատունիներու հարստութեան: Անոր կործանումէն ետք, հայերը սկսան արտագաղթել Յայաստանէն: Գաղթողներուն մեծ մասը հաստատուեցաւ Կիլիկիա :

1080ին Կիլիկիոյ մէջ հիմնուեցաւ Ռուբինեան թագաւորութիւնը, որ տեւեց շուրջ 300 տարի, մինչեւ 1375: Ապա, Կիլիկիա վերջնականապէս անցաւ թուրքերուն ձեռքը:

1555ին, Չայաստան բաժնուեցաւ թուրքերու եւ պարսիկներու միջեւ:

18րդ դարուն ռուսերը սկսան արշաւել դէպի հարաւ: Տեղի ունեցան ռուս-պարսկական պատերազմներ, որոնք աւարտեցան պարսիկներու պարտութեամբ: Իբրեւ հետեւանք, ռուսերը տէր դարձան Ղարաբաղի, Նախիջեւանի եւ Երեւանի, այլ խօսքով՝ Արաքս եւ Կուր գետերուն միջեւ տարածուող հողերուն:

Ռուս-պարսկական պատերազմներուն յաջորդեցին ռուս-թրքական պատերազմները, որոնք աւարտեցան դարձեալ ռուսերու յաղթանակով: Պարտեալ թուրքերը ստիպուած՝ Կարսը, Պաթումն ու Արտահանը յանձնեցին Ռուսիոյ:

Թուրքերու եւ պարսիկներու իշխանութեան տակ, հայ ժողովուրդը 600 տարի ենթարկուեցաւ անտանելի պայմաններու, հալածանքներու եւ մասնակի կոտորածներու: Անոր մէջ մեռած էր պայքարի ոգին եւ անկախութեան ձգտումը: Դժբախտաբար, ան չուներ նաեւ քաղաքական ղեկավարութիւն: Անոր միակ ապաւէնը հայ եկեղեցին էր: Այսպէս է, որ 17րդ դարու կէսերէն սկսեալ հայ եկեղեցականները փորձեցին եւրոպական միջամտութիւն գտնել՝ հայ ժողովուրդը դուրս բերելու համար իր յուսահատ վիճակէն: Այս նպատակով գումարուեցան կարգ մը ժողովներ:

Իսրայէլ Օրի, Յովսէփ Էմին եւ կարգ մը այլ դէմքեր փորձեցին օտար ժողովուրդներու եւ պետութիւններու ճամբով հայ ժողովուրդին վերադարձնել իր իրաւունքները: Դաւիթ Բէկ, Մխիթար Սպարապետ եւ Խամսայի մելիքութիւնները հայութեան մէջ արթն-

ցուցին պայքարելու եւ սեփական ուժին ապաւինելու գիտակցութիւնը:

Պոռթկումի եւ յեղափոխութեան հանգրուանը սակայն հասաւ աւելի ուշ, 19րդ դարու երկրորդ կիսուն, երբ հայկական զարթօնքը, 1863ի Ազգային Սահմանադրութիւնը եւ Սան Սթեֆանոյի ու Պերլինի դաշնագիրները հայ ժողովուրդին մօտ վերջնականապէս արմատաւորեցին «Երկաթ շերեփ»ի որդեգրման պատմական անհրաժեշտութիւնը:

Նախ ծնունդ առին յեղափոխական գաղտնի կազմակերպութիւններ՝ «Գաղտնի միութիւն բարձր հայոց» (Կարին), «Փրկութիւն ի միութիւն» (Վան), «Ոյժ» (Շուշի), «Երիտասարդ Հայաստան» (Թիֆլիս): Յեղափոխական այս կազմակերպութիւններուն նպատակն էր պաշտպանել հայ ժողովուրդին պատիւը, կրօնքը, աշխատանքն ու կեանքը:

1885ին, Վանի մէջ հիմնուեցաւ Արմենական կուսակցութիւնը, որ ունեցաւ հազիւ 11 տարուան կեանք: Արմենական կուսակցութիւնը եղաւ յեղափոխութեան պատրաստութեան կուսակցութիւն մը, որ դիմեց կարգ մը ահաբեկումներու՝ սանձելու համար քիւրտ աշիրաթապետերն ու հարստահարիչ թուրք պաշտօնեաները: Կուսակցութիւնը զբաղեցաւ նաեւ զէնքի ամբարունով եւ ժողովուրդի յեղափոխական տրամադրութիւններու պատրաստութեամբ:

1887ին, ժընեւի մէջ, խումբ մը հայրենասէր ուսանողներ հիմնեցին Հնչակեան կուսակցութիւնը, որ 1910էն ետք կոչուեցաւ Սոցիալ Ռեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն (Ս.Ռ.Կ.):

Սասնոյ Ա. ապստամբութեան (1894) ղեկավարն էր Յնչակեան Մեծն Մուրատը (Համբարձում Պոյաճեան), որ հաստատուեցաւ Սասնոյ մէջ եւ պատրաստեց բազմաթիւ երիտասարդներ, որոնք անոր յեղափոխական գաղափարներէն ներշնչուած՝ անդամակցեցան Յնչակեան կուսակցութեան:

Յնչակեան կուսակցութեան յեղափոխական գործունէութեան ամենէն փայլուն դրուագները կը հանդիսանան Ջէյթունի ապստամբութիւնը (1896), Գում Գափուի եւ Պապը Ալիի ցոյցերը (1890, 1895):

Արմենական եւ Յնչակեան կուսակցութիւններու կողքին, 1880էն սկսեալ, Արեւելահայաստանի մէջ կազմուեցան զանազան խմբակցութիւններ, որոնց նպատակն էր օգնութեան հասնիլ թրքահայ ժողովուրդին: Այս խմբակցութիւնները, որոնք իրարմէ բոլորովին անջատ էին, սուրհանդակներ կը դրկէին Հայաստան, տեղեկագիրներ կը պատրաստէին, թռուցիկներ եւ խմորատիպ թերթեր կը հրատարակէին, ժողովներ կը գումարէին եւ ծրագիրներ կը մշակէին:

1890ի ամրան, Թիֆլիսի մէջ, երկար ժողովներէ եւ խորհրդակցութիւններէ ետք, Քրիստափոր Միքայէլեանի ջանքերուն շնորհիւ կարելի կ'ըլլայ վերոյիշեալ խմբակցութիւնները համախմբել եւ կազմել Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը, որ կը նշանակէ հայ յեղափոխականներու միութիւն: Քրիստափորի անմիջական գործակիցները կ'ըլլան Սիմոն Զաւարեան եւ Ստեփան Զօրեան (Ռոստոմ):

Հ.Յ.Դ.ն կազմակերպական մեծ ցանց մը հաստատեց Թրքահայաստանի եւ Կովկասի քաղաքներուն

մէջ, գործիչներ դրկեց ամէն կողմ եւ կազմեց ֆետայական խումբեր, որոնք տարիներ շարունակ, մինչեւ Յայաստանի անկախութեան հռչակումը (1918), կռուեցան հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան համար:

Յ.Յ.Դ.ի յեղափոխական գործունէութեան ամէնէն շքեղ դրուագները կը հանդիսանան Պանք Օթոմանի գրաւումը (1896), Խանասորի Արշաւանքը (1897), Սասնոյ Բ. ապստամբութիւնը (1904), Սուլթան Յամիտի մահափորձը (1905) եւ բազմատասնեակ ֆետայական կռիւները, որոնք կը մղուին աննման հայդուկներու՝ Նիկոլ Դումանի, Անդրանիկի, Սերոբ Աղբիւրի, Գէորգ Չաւուշի եւ դաշնակցական մեծանուն այլ դէմքերու կողմէ:

1915ի հայկական Ցեղասպանութիւնը հայ ժողովուրդին կը հասցնէ իր պատմութեան ամէնէն ծանր հարուածը: Յայութիւնը կը կորսնցնէ իր համրանքին մէկ երրորդը եւ պատմական հայրենիքին հինգ-վեցերորդը:

Ցեղասպանութենէն հրաշքով փրկուածներ արաբական անապատներու ճամբով կ'ապաստանին Սուրիա, Լիբանան եւ Իրաք, ուրկէ աստիճանաբար կը ցրուին այլ երկիրներ: 1921ին ծայր կու տայ գաղթականական երկրորդ հոսանք մը, երբ ֆրանսացիները Կիլիկիան կը յանձնեն թուրքերուն: Յայութիւնը, բազմաթիւ զոհեր տալով, դարձեալ կը ստիպուի գաղթական դառնալ եւ Սուրիա, Լիբանան ապաստանիլ:

Այս միջոցին, դէպքերը այլ ընթացք կ'ունենան Արեւելահայաստանի մէջ, ուր Երեւանի դռներուն՝

Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի մէջ թուրքեր տեղի կու տան 1918ի Մայիսեան հերոսամարտերուն: 28 Մայիս 1918ին կը ստեղծուի Հայաստանի հանրապետութիւնը, որ թէւ երկուքուկէս տարուան կեանք միայն կ'ունենայ, սակայն հիմը կը հանդիսանայ այսօրուան անկախ Հայաստանին:

1918ի Հայաստանի հանրապետութիւնը կ'ունենայ խորհրդարան, յաջորդական կառավարութիւններ՝ գլխաւորութեամբ 4 վարչապետներու.- Քաջագունի, Խատիսեան, Օհանջանեան, Վրացեան: Կը կազմուին բանակ, օրէնսդրութիւն եւ արտաքին դիւանագիտական ներկայացուցչութիւններ: Հայաստանի վարիչները ճգնաժամային պայմաններու մէջ կը յաջողին ոչինչէն կերտել անկախ պետութիւն, Հայաստանը մաքրելով ոչ հայ տարրերէ:

2 Դեկտեմբեր 1920ին Հայաստան կը խորհրդայնանայ եւ այնուհետեւ մինչեւ 23 Սեպտեմբեր 1991, աւելի քան եօթը տասնամեակ ան կը ճաշակէ խորհրդային բռնատիրութեան դառնութիւններն ու զրկանքները: Հայաստանէն կ'անջատուին Ղարաբաղը, Նախիջեւանն ու Ջաւախքը: Առաջին երկուքը կը տրուին Ազրայէճանի, իսկ Ջաւախքը՝ Վրաստանի:

Սփիւռքի մէջ, հայրենի հողին կարօտով ապրող հայը կ'ապրի հայեցի իր դիմագիծին պահպանման լուրջ տագնապը: Ձուլումի վտանգը հայը կը հալածէ ամէնուր:

1965էն՝ Եղեռնի յիսնամեակէն ետք, Սփիւռքի հայութիւնը աստիճանաբար կը քաղաքականանայ եւ աշխարհին կը ներկայանայ իբրեւ պահանջատէրը իր ոտնակոխուած իրաւունքներուն: Ան կը դիմէ քա-

ղաքական, դիւանագիտական եւ գինեալ պայքարի զանազան միջոցներուն՝ Հայկական Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը պահանջելու եւ ցեղասպան թուրքերը պատասխանատուութեան հրաւիրելու համար:

1988ին, Արցախեան պահանջատիրութեան ծաւալումով հայ ժողովուրդի արդի պատմութիւնը կը թեւակոխէ նոր հանգրուան: Արցախի դատը ոտքի կը հանէ հայրենի հայութիւնը եւ զօրաշարժի կը մղէ հայկական Սփիւռքը: 23 Սեպտեմբեր 1991ին Հայաստան կը հռչակուի անկախ հանրապետութիւն:

Ղարաբաղի մէջ կը մղուին արիւնալի հերոսամարտեր: Կ'ազատագրուին հայապատկան գիւղեր ու ավաններ: Բիւր զոհողութիւններու եւ նահատակութիւններու գնով, Ղարաբաղ դուրս կու գայ Ազրայէջճանի իշխանութենէն եւ 2 Սեպտեմբեր 1991ին կը հռչակուի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը:

Այժմ աշխարհի մէջ կ'ապրին շուրջ 7 միլիոն հայեր, որոնց 3 միլիոնը Հայաստանի հանրապետութեան մէջ: Հայաստանէն դուրս, Սփիւռքի ակելի քան 30 երկիրներու մէջ սփռուած են 4 միլիոն հայեր: Արտասահմանի մէջ հայերը տարածուած են մասնաւորաբար Մ. Նահանգներու, Քանադայի, Ռուսիոյ, Ֆրանսայի, Լիբանանի, Սուրիոյ, Արժանթինի, Յունաստանի, Աւստրալիոյ, Իրանի եւ Մերձաւոր արեւելեան երկիրներու մէջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<i>Անուն, նպատակ, միջոցներ</i>	3
<i>Ներածական</i>	5
<i>Ինչո՞ւ Հ.Մ.Բ.Մ.ական ըլլալ</i>	5
<i>Հ.Մ.Բ.Մ.ի պատմություն</i>	7
- <i>Հ.Մ.Բ.Մ.ի ծնունդը</i>	8
- <i>Հ.Մ.Բ.Մ.ը հայրենիքէն ներս</i>	10
- <i>Հ.Մ.Բ.Մ.ը Սփիւռքի մէջ</i>	11
- <i>Հ.Մ.Բ.Մ. կը վերածուի Համագաղութային կազմակերպութեան</i>	12
- <i>Միջ-դիւաններու խորհրդածոյովներ</i>	13
- <i>Համա-Հ.Մ.Բ.Մ.ական մարզախաղեր</i>	14
- <i>Համա-Հ.Մ.Բ.Մ.ական քանակումներ</i>	15
- <i>Համա-Հ.Մ.Բ.Մ.ական սկսույթական խմբապետական համագումարներ</i>	16
- <i>Հ.Մ.Բ.Մ.ը կը վերադառնայ երկիր</i>	17
<i>Վարչագիտական ծանօթութիւններ</i>	
- <i>եւ կազմակերպական կառոյց</i>	19
<i>Հ.Մ.Բ.Մ.ական մարզիկին փաստաթանեան</i>	29
<i>Հայոց պատմություն</i>	31

